24816

76
4167

ԲԱՆԱՁԵՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՎԱՐՁՈՒԹՅԱՆ

4-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ

1930 թ.

331.88(47.925)
Ա.-89

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՄՅԱՆԻ ԿՈՄ. ԿԵՆՏ. ՎԱՐՉ.

15 JAN 2010
331.88(47·925)
Ա-89
15041.57 1064

ԲԱՆԱՁԵՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՎԱՐՁՈՒԹՅԱՆ

4-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ

1930 թ.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ ԵՐԵՎԱՆ
Г. ЕРЕВАН
Ա. ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ԱՆՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄ. ԿԵՆՏ. ՎԱՐՉ.

12 5 FEB 2013

24876

ՀԱՅՊՈՒԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 2671
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 5188 (բ)
ՏԻՐԱԺ 2000

Կառուցողների Արհմիության Կենտվարչության 4-րդ պլենումը լսելով ընկ. Ա. Գալոյանի զեկուցումը վարչության նախագահության 1929 թ. 2-րդ կիսամյակի գործունեության մասին, Կուլտաժնի (Ա. Բաբասյան) և ՃՏՍ-ի (Քոչար) առթիվ զեկուցումները՝ արձանագրում է, որ Կենտվարչության նախագահությունը անշեղորեն կիրառել է միության բարձրագույն մարմինների դիրեկտիվները և աչքառու նվաճումներ ունի:

ա) Ցերկրի ինդուստրացման

բ) սոցիալիստական մրցման

գ) գյուղի կոլեկտիվացման և աշնանացանի կամպանիաների, չեֆության, բանբիդաղների կազմակերպման, անգրագիտության վերացման:

դ) տնտեսական և պրոֆմիութենական մարմիններում բանվորների առաջ քաշման:

յե) քաղ. պրոֆ և ընդհանուր կուլտուր լուսավորական աշխատանքներում:

զ) կենդանի ղեկավարություն, պրոֆ ապարատների բանվորականացման:

ե) տարիֆային նոր ռեֆորմի կենսագործման, բանվորական և մասնագետ ուժերի պատրաստման և վերապատրաստման ասպարիզներում:

Պլենումն առաջարկում է հետևյալը՝

1. Մինչև յեկող սեզոնի սկիզբը վերակազմել միութենական ստորին մարմինները և լայնացնել նրանց ցանցը, խոշոր բանկոմները նպատակահարմար վայրերում վերածել չինկոմների և սպասարկումը ավելի մոտեցնել բանվորական մասսաներին:

2. Արձանագրելով նախագահության կենդանի ղեկավարության աշխուժացումը՝ հետագայում ե՛լ ավելի ուժեղացնել այն:

3. Բանվորների առաջ քաշման գործում տարած աշխատանքների տեմպն ավելի ուժեղացնել: Շինարարական ապարատները լիովին ապահովել առաջ քաշվող վորակյալ բանվորներով: Պարբերաբար հրավիրել առաջ քաշվածների խորհրդակցություններ, հրահանգչական զեկուցումներ տալ նրանց անելիքների մասին, ինչպես նաև համապատասխան դասընթացներ կազմակերպել:

4. Պետապարատի զտման և ստուգման աշխատանքներում միության մասնակցությունը յեղել է անբավարար: Անհրաժեշտ է հետագայում ապահովել զտման և ստուգման աշխատանքներին միության անդամների ակտիվ մասնակցությունը:

5. Անչեղորեն ընդունելով միանձնյա ղեկավարության մասին ՀԱՄԿԿ (բ) կողմից տրված դիրեկտիվը՝ առաջիկայում այդպիսին ամենալայն կերպով մասսայականացնել բանվորական լայն զանգվածների մեջ:

6. Տեխնիկական ուժի (մասնագետների) վերապատրաստման աշխատանքները (Յերևանում) արդեն ձեռնարկված են. պլենումը նախագահության ուշադրությունն է հրավիրում կուրսերում բանվորական կորիզն ապահովելու խնդրի վրա, պլենումն անհրաժեշտ է համարում մասնագետների պատրաստման և վերապատրաստման կուրսեր կազմակերպել, պատրաստման կուրսեր կազմակերպել նաև Լենինականում:

7. Անհրաժեշտ է շտապ կարգով անցնել բանվորական բրիգադների կազմակերպման աշխատանքներին՝ սահմանելով բրիգադների շեֆություններ, համապատասխան չին-մարմինների վրա:

8. Վորակյալ բանվորական ուժի դեֆիցիտը վերացնելու համար անհրաժեշտ է.

ա) ուժեղացնել նախագահության հսկողությունը չին-մարմինների վրա, վորպեսզի համաքական պայմանագրերով երենց վրա վերցրած պարտավորությունները (բրիգադային կարգով բանվորներին վորակավորելու համար) լրիվ և նպատակահարմար կերպով կատարեն առաջիկա տարում:

բ) Հատուկ ուշադրություն դարձնել Շինուսի, ՅԻՏ-ի մեթոդով բանվորների վորակավորման համար կազմակերպված դասընթացների վրա: Համապատասխան մարմինների միջոցով միջոցներ ձեռք առնել Շինուսի առորյա պահանջները բավարարելու համար:

գ) բանվորական ուժի դեֆիցիտը մեղմացնելու կարևոր միջոցներից մեկը չին-սեգոնի լրիվ ոգտագործումն է: Նախագահությունը համապատասխան մարմինների միջոցով անհրաժեշտ պայմաններ պիտի ստեղծի և հարկադրի չինմարմիններին, մինչև սեզոնի բացումը նախապատրաստվել, այն է՝ աշխատանքները նախորոք ապահովել չինանյութերով, արանսպորտով և բանվորական ուժով ամրացնելով (կոնտրակտացիայի կարգով):

9. 1928—29 թ. չինարտադրանները Հայաստանում 100 տոկոսով և վորոշ աշխատանքներում դեռ ավելին կատարվել և, չնորհիվ ոգտվելման և անընդհատ արտադրական շարաթի անցման: Հետագայում 5-ամյա պլանը չորս տարում կատարելու համար, հանձնարարել նախագահության՝ միջոցներ ձեռք առնել, վորպեսզի չինարարական մարմինները, վորոնք դեռ մինչև այժմ չեն անցել անընդհատ շարաթի, նախապատրաստվեն առաջիկայում անցնելու արտադրական անընդհատ շարաթի:

10. Արձանագրելով ոգտվելման նվաճումները՝ պլենումն անհրաժեշտ է համարում, ավելի ուժեղացնել նախագահության կենդանի ղեկավարությունը:

11. Հարվածային բրիգադները,

վորոնք պիտի առաջնորդեն շինարարության վրա դրդված բանվորներին մեր միության գծով, բավարար չափով չեն կազմակերպված, նախագահությունը հետագայում լուրջ ուշադրություն պետք է դարձնի հարվածային բրիգադաների կազմակերպման վրա: Բրիգադաներին իրենց անելիքների հետ լավ ծանոթացնելու համար, հաճախակի պիտի հրավիրել խորհրդակցություններ և կոնֆերանսներ:

12. Աշխատանքի դիսցիպլինայի բարձրացման խնդրում, անցյալ տարիների համեմատությամբ, միությունն աչքառու նվաճումներ ունի, սակայն դեռ խսպառ չեն վերացված բանվորների հետամնաց շերտերի մեջ գոյություն ունեցող կորզողական տրամադրությունները:

13. Այդ չերևույթի դեմ պայքարելու համար, պլենումը հանձնարարում է նախագահության՝ ուժեղացնել կուլտ-դաստիարակչական աշխատանքը, առանձնապես սեզոնային բանվորների մեջ:

14. Գտնել, վոր ռացիոնալացման և մեքենայնացման աշխատանքները մեր շինարարության մեջ համարյա թե բացակայել են, բացի փոքրիկ ձեռնարկումներից: Այդ խնդիրը, բացի աշխատանքների արտադրողականության բարձրացումից, ամենասերտ կերպով կապված է ինքնարժեքի իջեցման հետ: Պլենումը հրավիրում է նախագահության և տնտեսական մարմինների հատուկ ուշադրությունն այդ ամենակարևոր խնդրի վրա և առաջարկում է առաջիկայում ամենակտրուկ միջոցներ ձեռք առնել այդպիսին իրագործելու համար:

15. Միության ճարտ-տեխնիկ. սեկցիան պետք է ավելի ուշադրությամբ և ակտիվությամբ ճարտ-տեխնիկ աշխատանքներին ներգրավի, աշխատանքների արտադրողականության բարձրացման, տեղական շինանյութերը կատարելագործված գործիքներով արտադրելու, դեֆիցիտային շինանյութերը տեղականով փոխարինելու և այլ խնդիրների վրա:

16. Արտադրական խորհրդակցությունների ակտիվ բանվորներից և գյուտարարների խրախուսելու նպատակով, պլենումն նախագահության ուշադրությունն և հրավիրում, վորպեսզի շինարարական մարմինները անչեղորեն կատարեն կառավ. մարմինների վորոշումները

և ՀԱՄԿԽ-ի 30 թ. մարտի 8-ի վորոշումը գյուղատարածքներին և արտ. խորհրդակցությունների ակտիվ բանվորներին պարզեվատրելու վերաբերմամբ:

17. Արտադրական հանձնաժողովների և խորհրդակցությունների աշխատանքները ել ավելի ուժեղացնելու նպատակով ուժեղացնել կենտավարչության անդամների և հրահանգիչների կենդանի ղեկավարությունը, խորհրդակցություններին անմիջապես մասնակցելու և ուղղություն տալու միջոցով:

18. Վորովհետև նոր տարիֆ-ռեֆորմի կիրառման դրական հետևանքները կապված են նոր շրջանային (ռայոնի) դնացուցակների ու նորմաների ժամանակին նշանակման ու գործադրման հետ, ուստի պլենումը նախագահության ուշադրությունն և հրավիրում դնացուցակների վերամշակումը համապատասխան մարմինների միջոցով արագացնելու և հրատարակելու գործի վրա:

19. Մասնագետների աշխատավարձի մեջ կարգավորում և համապատասխան համաչափություն մտցնելու համար, առաջարկել նախագահության ամենակարճ ժամանակամիջոցում բոլոր մասնագետներին (ճարտ-տեխնիկներին) յենթարկել տարիֆիկացիայի:

20. Դժբաղդ պատահարների թիվը չինարարության մեջ մինիմումի հասցնելու համար, պլենումը նախագահության ուշադրությունն և հրավիրում՝ Աշխժողկոմատի մարմինների միջոցով կորուկ միջոցների դիմել, աշխ. անվտանգությունն ապահովելու համար:

1. ԿՈՒԼՏ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԹԻՎ

1. Արձանագրելով, վոր անգրագիտության և կիսագրագիտության վերացման պլանը դերակատարվել է, 3 ամյա պլանը կատարելով 6 ամսում, պլենումն առաջադրում է՝

ա) շարունակել անգրագիտության վերացման շուրջը միության անդամների մեջ հասարակական լայն կարծիք ստեղծելու գործը, հաճախակի զեկուցումներ կազմակերպել՝ միության լայն մասսաների ուշադրությունը բևեռելով այդ կարևոր գործի վրա:

բ) դրագիտական դպրոցների թերությունները վերացնելու, միության մար-

մինների հսկողությունը նրանց վրա ուժեղացնելու և անկանոն հաճախումների դեմ պայքարելու համար, ուժեղացնել բանկոմ-խմբկոմների կենդանի կապն այդ դպրոցների հետ, ուսուցչական կազմի և բանկոմ-խմբկոմներին կից կուլտսեկտորների միացյալ նիստեր դումարել, լսել դպրոցների դեկավարների հաշվետու զեկուցումներ, բանվորական ժողովներում և խմբկոմ-բանկոմների նիստերում:

գ) առանձին ուշադրություն դարձնել ատեստացիոնների մեջ անգրագիտության և կիսագրագիտության վերացման գործի վրա, կազմակերպելով գրագիտական դպրոցներ այն գյուղերում, ուր կան 100 հոգի և ավելի միության անդամներ:

դ) գրագիտական դպրոցներ ավարտողներին ընթերցանության հետ կապելու նպատակով, հրատարակել հանրամատչելի քաղաքական և գեղարվեստական բրոշյուրներ:

ե) գրագիտական դպրոցներ ավարտողներին մյուս կրթական դպրոցներն ուղարկելու համար, միջնորդել Քաղլուսվարական մարմինների առաջ՝ գոյություն ունեցող հանրակրթական դպրոցներում ապահովելու համապատասխան քանակի տեղեր:

2. ՊՐՈՖ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ա) պրոֆկադրերը վերապատրաստելու նպատակով կազմակերպել Յերևանում, Լենինականում և Փամբակ-Լոռում 2—3 ամսյա պրոֆդասընթացներ:

բ) մասսայական պրոֆլուսավորությունը ծավալելու համար, անհրաժեշտ ե բոլոր կարմիր անկյուններում և ակումբներում կազմակերպել պրոֆդպրոցներ. նույն նպատակով միության մարմինների կողմից կազմակերպված բոլոր գրագիտական դպրոցների ծրագրերում մտցնել պրոֆչարժման առարկաներ:

3. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՅԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա) համալսարանի տեխֆակին կից կազմակերպել ցեխային տեխնիկների, վարչա-տնտեսական պերսոնալի, գծագիրների և ցեխային ճարտարապետների դասընթացներ, վոչ պակաս 4 խմբից և ին-

դուստրիալ տեխնիկումին կից կազմակերպել բրիգադիրներ–տեխնիկների մի դասընթաց, մի խմբով և նրան կից նախապատրաստական դասընթաց՝ 3 խմբից վոչ պակաս։

բ) բանվորներին ինդուստրիալ տեխնիկումում տեղավորելու նպատակով, ինդուստրիալ տեխնիկումին կից կազմակերպել նախապատրաստական դասընթացներ։

գ) Աշխատողկոմատի միջոցով կազմակերպել մի շարք դեֆիցիտային պրոֆեսիաների դասընթացներ (տասնապետների, Շինուսի, քարտաշ–վորմնադիրների, հյուսների և այլն)։

4. Տեխֆակի շինարարական տեխնիկումների բանվորական ուժի պատրաստման և վերապատրաստման դասընթացների վրա միության հսկողությունն ե՛լ ավելի ուժեղացնելու համար անհրաժեշտ ե՝

ա) լսել նրանց հաշվետու զեկուցումները միության մարմինների նիստերում և բանվորական լայն ժողովներում։

բ) բանվորական բրիգադների միջոցով քննել նրանց գործունեությունն ու պլանների կատարումը։

գ) հետևել ուսանողության սոցիալական կազմի կարգավորման և ապահովել կառուցող բանվորների համար համապատասխան քանակի տեղեր։

5. ԴՅՈՒՂՈՒՄ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ա՝ լայն ագիտացիա տանել գյուղի հետ կապ ունեցող կառուցող բանվորների մեջ, կոլեկտիվ տնտեսություններում ընդգրկելու համար։

բ) դարնանացանի կամպանիան անցկացնելու, կոլխոզնիկների միջից անգրագիտությունը վերացնելու համար, միության միջոցներից արվող հատկացումները համարելով վոչ բավարար՝ այդ նպատակով կազմակերպել կամավոր նվիրատվություններ։

6. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա) միջոցներ ձեռք առնել հասակավորներին ֆիզկուլտուրայի խմբակներում ներգրավելու համար։

բ) կարգավորել և վորակավորել ֆիզկուլտ հրահանգչական կազմը։

7. Արտադրական մասսայական լու-

սավորությանն ե՛լ ավելի զարկ տալու համար՝

ա) բոլոր ակումբներին և կարմիր անկյուններին կից կազմակերպել խմբակներ, ըստ արհեստների, նրանց արհեստին վերաբերող խնդիրներն ուսումնասիրելու համար:

բ) բոլոր հիմնարկներին կից կազմակերպել «տեխնիկական մասսային» անկյուններ և այդ աշխատանքների համար ոգտագործել ճարտարապետ-տեխնիկական ուժերին:

գ) կազմակերպել մասսայական զեկուցումներ— հիմնարկների պլանների նրանց կատարման, հեռանկարների և տեխնիկական նվաճումների մասին: Նույն կերպ բանվորներին ծանոթացնել Խորհրդային Միության և արտասահմանում տեղի ունեցող տեխնիկական նվաճումների մասին:

8. բանվորների մեջ ինտերնացիոնալ դաստիարակությունն ե՛լ ավելի ծավալելու նպատակով, անհրաժեշտ ե, բացի խմբակային պարապմունքներից, զեկուցումների, զրույցների և բարձրաձայն ընթերցանությունների միջոցով նրանց

ծանոթացնել միջազգային բանվորական հեղափոխական շարժման հետ:

9. Պատերազմի աճող վտանգը և կապիտալիստական պետությունների կողմից Խորհրդային Միության հանդեպ նոր-նոր դավերի հյուսումն առաջնակարգ խնդիր ե դնում պրոլետարիատի առաջ ռազմականորեն պատրաստվելու: Այդ պատճառով անհրաժեշտ ե միանգամայն նորմալ և կազմակերպված դրությամբ ծավալել ռազմական ագիտացիան և ընդգրկել լայն մասսաներ այդ գործում:

10. Կարգավորել զրադարանները թե ակումբներում և թե կարմիր անկյուններում, գնել նոր լույս տեսնող գրականությունը: Կազմակերպել շրջիկ զրադարաններ:

ԲԱՆԱՁԵՎ

Կառուցողների արհմիության կից հարտարապետա-տեխնիկական սեկցիայի Հանրապետական բյուրոյի հաշվետու զեկուցման առթիվ:

(Զեկ. ընկ. ՌՈԶԱՐ)

Կառուցողների ՃՏՄ-ի Հանրապետական բյուրոյի պլենումը ընտրելով ՃՏՄ-ի Հանրապետական բյուրոյի փոխնախագահ

ՊԵՏ. ԳՐՍ. ՀԱՆՐԱՊԵՏԱՐԱՆ
ՀՍՍՀ
ՀՍՍՀ
ՄԻ. Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

կողմից կիրառվում և խիստ զանգվածային պլենումն առաջադրում է միության կենտրոնական կոմիտեի համապատասխան հրահանգներ տալ տեղական պրոֆ-կազմակերպություններին:

Պլենումն անհրաժեշտ է համարում վերամշակել ճարտարապետ-տեխնիկների մեջ տարվելիք քաղաքական, հասարակական աշխատանքների խնդիրը, այդ նպատակի համար ոգտագործելով ակումբները, քաղաքական կամպանիաները, մասսայականացնելով կուսակցության և խորհրդային մարմինների վորոշումները և այլն:

6. Մատնանշելով, վոր ճարտարապետ-տեխնիկ աշխատավորների աշխատանքի տեխնիկական և հասարակական քննադատությունը և ինքնաքննադատությունը ՃՏՍ-ի կողմից անբավարար է, անհրաժեշտ ցուցմունքներ տալ տեղերին ճարտարապետ-տեխնիկական աշխատավորների լայն մասսաներին, ինքնաքննադատության կիրառման գործում ներգրավելու մասին: Տնտեսական և պրոֆմիութենական մարմինների գծով պայքարել ճարտարապետ-տեխնիկների մեջ մինչ այսոր գոյություն ունեցող վոչ ճիշտ կարծիքի դեմ, վոր «անհարմար է իրենց ընկերներին հասարակական քննադատության յենթարկել»:

7. ՃՏՍ-ի աշխատանքների ծավալն ու տեմպը պահանջում են այնպիսի լայն աճում, վոր սահմանափակել սեկցիայի ծախսերը 1930 թ. նախահաշվի մեջ հնարավոր չէ: Պլենումն առաջարկում է ՃՏՍ-ի կենտբյուրոյին՝ Միության կենտվարչության հետ միասին հրահանգել տեղական կազմակերպություններին կենտրոնացնելու ՃՏՍ ՀԲ այն բոլոր տոկոսային մասհանումները, վորոնք նախատեսված են ճարտարապետ-տեխնիկ աշխատավորների կուլտուրական կարիքների համար թե անցած, և թե առաջիկա տարիների հավաքական պայմանագրերով:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

1. Ճարտարապետ-տեխնիկ աշխատավորները պիտի լինեն սոցիալիստական շինարարության աշխատանքների առաջավոր դիրքերում. բոլոր ազնվորեն աշխատող ճարտարապետ-տեխնիկները իրենց

պատասխանատու պիտի դան խորհրդային հասարակայնության առջև, իրենց յուրաքանչյուրի թերությունների և սխալների համար:

ՃՏՍ-ները պիտի ներգրավեն ճարտեխնիկներին բանվորական մասսաների արտադրական տեխնիկական մակարդակի բարձրացման այլև կոլեկտիվների արտադրական աշխատանքների բարդավաճման գործում:

2. Սոցիալիստական տնտեսության վերակառուցման շրջանում առաջադրվող խնդիրների բարդությունը հաղթել և անցնել լոզունգը 5-ամյա պլանը, սոցմրցումը պահանջում են ավելի քան ուժեղացնել ճարտ-տեխնիկական ուժերի ներգրավումը միութենական տնտեսական աշխատանքների մեջ, կազմակերպելով նրանց լայն մասնակցությունը՝ քննադատության, ինքնաքննադատության, Բանգյուղտեսչության ակտիվի աշխատանքների, արտադրական և վերահսկիչ հանձնաժողովների ու խորհրդակցությունների, սոցմրցման պայմանագրերի կնքման և իրականացման աշխատանքների մեջ:

Պլենումը հանձնարարում է ՃՏՍ ՀԲ հարց հարուցել Կառուցողների Արհմիության Կենտվարչության առաջ, ճարտեխնիկ աշխատավորների մասնակցությունը միության տնտեսական աշխատանքներում առանձնապես հաշվառման յենթարկելու անհրաժեշտության մասին:

3. Պլենումը գտնում է, վոր ուսանող պրակտիկանտների ռացիոնալ ոգտագործման խնդիրն արտադրության մեջ, կոնտրակտացիայի սկզբունքների լայն իրականացումը և անընդհատ արտադրական պրակտիկայի գործադրությունը խոշոր չափով ընկնում է ՃՏՍ-ների վրա: Պլենումն առաջարկում է բոլոր ՃՏՍ-ներին այդ խնդիրներին առանձնացնել ավելի քան մեծ ուշադրություն՝ մաքսիմալ չափով ոժանդակելով պրակտիկանտներին և ըստ ժյորներին, նրանց աշխատանքներում, արտադրության մեջ:

4. Նպատակ ունենալով լայն ոժանդակություն ցույց տալ բանվորական դյուտարարությանը՝ առաջարկել ՃՏՍ ՀԲ-ին ուժեղացնել իրենց կից գյուտարարական բյուրոյի աշխատանքները:

5. Շինարարության ձևերի ռացիո-

նալացման խնդրի խորացումը, ռացիոնալացման պլանային կիրառումը որվա խնդիր է։

Պլենումը հանձնարարում է ՃՏՄ ՀԲ-ին նախագիծ մշակել շինարարության և շինանյութերի արդյունաբերության ռացիոնալացման աշխատանքների կազմակերպման համար՝ չորս միջոցներ ձեռնարկելով կազմակերպելու շինարարության ռացիոնալիզատորների համամիութենական ընկերության Հայաստանի բաժանմունք։

6. Անցած 1929 թ. շինսեզոնի արդյունքները պարզելու, սեզոնի ընթացքում տեղի ունեցած բացերը հայտաբերելու և վերացնելու, ինչպես և նոր 1930 թ. շինսեզոնին պատրաստվելու առաջարկությունները և խնդիրները լուսաբանելու նպատակով՝ հանձնարարել ՃՏՄ ՀԲ առաջիկա կարճ ժամանակի ընթացքում հրավիրել արտադրության մեջ աշխատող ճարտ-տեխնիկների համաքաղաքային կոնֆերանս, միաժամանակ ոժանդակություն ցույց տալ և մասնակցել շինարարությամբ զբաղվող հիմնարկ-ձեռնարկների մեջ շինսեզոնին լավ պատրաստվելու համար, սոցմրցում կազմակերպելու մեջ։

7. Մատնանշելով ճարտ-տեխնիկ աշխատավորների սուբ կարիքը, որ կարող է արդելք հանդիսանալ շինարարական աշխատանքների ծավալմանը, ըստ 5-ամյա պլանի, պլենումն առաջարկում է ՃՏՄ ՀԲ-ին՝ հետաքրքրել ճարտ-տեխնիկների աշխատանքը հիմնարկներում և վարչություններում, նրանց ռացիոնալ ձևով ոգտագործելու և մաքսիմալ չափով արտադրության մեջ փոխադրելու նպատակով։

ՏԱՐԻՖ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Զանազան պարտականություններից ճարտ-տեխնիկ աշխատավորներին թեթևացնելու, նրանց նպատակահարմար ձևով ոգտագործելու խնդիրը բնավ չի կիրառում ՃՏՄ-ների և միութենական կազմակերպությունների կողմից։ Վերջիններս այդ խնդրի վրա հարկ չեղած ուշադրություն չեն դարձնում։ Պլենումն հանձնարարում է ՃՏՄ ՀԲ՝ հարց հարուցել միութենական Կ. վարչության առաջ, կարճ ժամանակամիջոցում այդ առթիվ համապատասխան հրահանգներ տալ տեղական պրոֆկազմակերպություններին։

2. Ընդունելով, որ ճարտ-տեխնիկ աշխատավորների տարիֆիկացիայի խնդ-

գիրը մինչև այսոր չի կիրառվել կյանքում, պլենումը պարտադրում է միությանը (ՃՏՍ-ին) մասնակցել այդ խնդրի գործնական լուծման, և առաջարկում է ՃՏՍ ՀԲ կարճ ժամանակի ընթացքում կատարել ճարտ-տեխնիկ աշխատավորների տարիֆիկացիան բոլոր շինկազմակերպություններում:

3. Արձանագրելով ճարտ-տեխնիկների սանատորիա-կուրորտային ոգնության ապահովման անբավարար լինելը՝ առաջարկել ՃՏՍ ՀԲ իրականացնել ՀԱՄԿՍ-ի հրահանգն արտադրության մեջ աշխատող ճարտ-տեխնիկ աշխատավորներին կուրորտներ, սանատորիաներ և հանգստի տներ գործուղելիս, համաձայնեցնել բանվորների հետ:

Միաժամանակ նկատի ունենալով, որ հանգստի տների պահանջը կառուցող ճարտ-տեխնիկ աշխատավորներից, նրանց աշխատանքի պայմանների շնորհիվ տեղի չի ունենում սեզոնի վերջում, պլենումն առաջարկում է ՃՏՍ ՀԲ-ին կարգավորել այս խնդիրը համապատասխան կազմակերպությունների հետ:

4. Բնակարանային սուր կարիքը, որի հետևանքով և մասամբ ճարտ-տեխնիկ աշխատավորների բնակարանային անբավարար պայմանները զրկում են ճարտ-տեխնիկներին իրենց ազատ ժամերը նվիրել գիտական տեխնիկական աշխատանքներին՝ պլենումն առաջարկում է ՃՏՍ ՀԲ ծավալել կոոպերացման սկզբունքը բոլոր ճարտ-տեխնիկ աշխատավորների մեջ՝ ուժեղացնելով այժմ գոյություն ունեցող «Կարմիր մասնագետ» բնակկոոպերատիվը:

ԿԱԴՐԵՐ

1. Կուլտ-աշխատանքների ասպարիզում ակտուալ և այժմեական խնդիրը ճարտ-տեխնիկական կադրերի պատրաստման և նրանց վերավորակավորման խնդիրն է:

Ճարտ-տեխնիկների կադր պատրաստելու տեմպը բավարար չէ և բնականաբար չի կարող թեթևացնել կադրերի այն պակասը, որ այժմ գոյություն ունի և 5-ամյա պլանի շինարարության ծավալման շնորհիվ պիտի է՛լ ավելի աճի: Անհրաժեշտ է ոգտագործել բոլոր այն հնարավորությունները, որոնք ի վիճակի

կլինեն մեղմացնել այդ դեֆիցիտը:

Կրթական հաստատությունների ցանցի լայնացման, ուսումնական ծրագրի կրճատման և թեթևացման ու Պետ. համալսարանի տեխֆակին կից եկատերնատի ինստիտուտ ստեղծելու, ինչպես նաև մասնագետների ներմուծման բոլոր հնարավորությունների ոգտագործմանը զուգընթաց, պլենումը հիմնվելով կուսակցական և խորհրդային իշխանության հրահանգների վրա՝ անհրաժեշտ է համարում լայն չափով ոգտագործել չինարարպրակտիկների առաջքաշումը, նրանց համապատասխան դասընթացներում տեսականորեն պատրաստելու և նեղ. մասնագիտության ճարտարապետների և տեխնիկների սկզբունք կիրառելու միջոցով:

Հավանություն տալով նման դասընթացների կազմակերպման ուղղությամբ ՃՏՍ ՀԲ կոմից արված քայլերին՝ պլենումն առաջարկում է ՃՏՍ ՀԲ հատուկ ուշադրություն դարձնել այդ դասընթացների շուտափույթ կազմակերպման գործին:

Միաժամանակ պլենումն անհրաժեշտ է գտնում լայն չափով ոգտագործել ու ծավալել ակնհետ կուրսերի սկզբունքը:

2. Տեխնիկական կադրերի պատրաստման գործում կարևոր է ՃՏՍ-ի մասնակցությունը՝ ուսումնական պլանների, ուսանողական անընդհատ պրակտիկայի, կոնտրակտացիայի և այլ խնդիրների մշակման և կիրառման ասպարիզում: Պլենումը հանձնարարում է ՃՏՍ ՀԲ ուժեղացնել իր կապը տեխնիկական-կրթական հաստատությունների հետ՝ ոժանդակություն և մասնակցություն հանդես բերելով նրանց կյանքում արծարծվող բոլոր խնդիրների նկատմամբ:

3. Նպատակ ունենալով տարածել և խորացնել տեխնիկական գիտությունները քաղաքում և գյուղում, ոժանդակելով բանվորական և գյուղացիական լայն մասսաներին տեխնիկական ընդհանուր գրագիտություն ձեռք բերելու գործին և մասնակից դարձնելով նրանց տեխնիկական տնտեսական ստեղծագործության, հանուն յերկրի արտադրական ուժերի աճման և զարգացման՝ պլենումն առաջարկում է ՃՏՍ ՀԲ, համաձայնության գալով պատշաճ կազմակերպությունների հետ, նախաձեռնել «Տեխնիկան մասսաներին» համամիութենական ընկերության Հայաս-

տանի բաժանմունք կազմակերպելու գործը։

4. Միության խոշոր կենտրոնները ճարտ–տեխնիկ աշխատավորների հեռավոր էքսկուրսիա կազմակերպելու, ինչպես ճարտ–տեխ. աշխատավորների դիտական տեխնիկական գործուղումներ կազմակերպելու անհրաժեշտությանը զուգընթաց, պլենումն առաջարկում է ՃՏՍ ՀԲ լայնացնել դիտական տեխնիկական դասախոսությունների ցանցը, ճարտարապետ–տեխնիկ աշխատավորների համար և միաժամանակ ոգտագործել բոլոր ֆինանսական՝ հնարավորությունները՝ դիտական տեխնիկական դրադարան կազմակերպելու համար։

5. ՃՏՍ–ների աշխատանքը բանվորների արտադրական լուսավորության առպարիզում պետք է կազմի միությունների պլանային աշխատանքի մի մասը և չպիտի կրի ինքնուրույն բնույթ։ Այդ աշխատանքը չի ստացել իր զարգացումը շնորհիվ նրան, որ միությունը հարկավոր ուշադրություն չի դարձրել ճարտ–տեխնիկ աշխատավորների ոգտագործման վրա։

Հաշվի առնելով այդ աշխատանքի կարևորությունը և անհրաժեշտությունը՝ պլենումը գտնում է, որ ճարտ–տեխնիկ աշխատավորների մասնակցությունը այդ կարևորագույն ասպարիզում պիտի ամեն կերպ ուժեղացվի, ուստի և առաջարկում է ՃՏՍ ՀԲ–ին խնդիրը մշակել և անցնել դրա կենսագործման։

ԲԱՆԱՁԵՎ

1929—30 թ. շինսեզոնի համար ներմուծվող շինանյութերի թերի մատակարարման մասին Հայաստի ղեկուցման առթիվ։

1. Շինարարությունն եժանացնելու նպատակով, տրանզիտով հանձնվող նյութերի քանակը ավելացնելու, հասցնելով այդպիսին 75–ից 80 տոկոսի։

2. Այնտառանյութերի և ցեմենտի ներմուծումը կանոնավորելու համար, այս տարի նույնպես ունենալ ընդունման կայարաններում հատուկ ներկայացուցիչներ։

3. Արագացնել Հայաստի կողմից նախագծած նոր պահեստի կառուցումը, որ նպաստելու յե շինանյութերի կենտրոնացմանը և եժանացմանը։

4. Առաջարկել, որ շինարարու-

թյամբ զբաղվող հիմնարկները սահմանված ժամկետներին ներկայացնեն հայտեր և պայմանագրեր կնքեն Հայաստի հետ, պլանային և տրանզիտային կարգով շինանյութերը ժամանակին ստանալու համար։

5. Տեղական բյուջեի հաշվով կառուցվող շինարարության համար հատկացված վարկերի բաշխումը և բացումը տրամադրել, վորպեսզի այդ հիմնարկները ժամանակին ապահովված լինեն շինանյութերով։

6. Խնդրել Ժողկոմխորհին՝ միջոց ձեռք առնել ապահովելու Հայաստի ներկայացրած պահանջներով շինանյութերի լրիվ ստացումը։

7. Խնդրել Ներքգործժողկոմատին՝ չտապ պարզելու հանրապետական ֆոնդերի չափը, հիմնարկների մեջ բաշխելու համար։

8. Ի նկատի ունենալով, վոր Հայաստի կողմից մատակարարվող շինանյութերը հաճախ իրենց տեսակով և վորակով չեն համապատասխանում շինարարության պահանջներին, անհրաժեշտ համարել Հայաստի գնման բաժնում պահել շինանյութեր վորակավորող հատուկ մասնագետ։

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՄԻՆ՝ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱՇԽԱԺՈՂԿՈՄԱՏԻ ԱՇԽԵՇՈՒԿԱՑԻ ԲԱՆԻ ՁԵԿՈՒՅՑՄԱՆ ԱՌԹԻՎ, ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՎԱՐՁՈՒԹՅԱՆ 4-ՐԴ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ

1. Պլենումն արձանագրում է, վոր վորակյալ շինբանվորների պակասը, վոչ արհեստների դծով (քարտաշ, վորմնադիր, ծեփագործ), վոչ միայն չի մեղմացել, այլ ընդհակառակը՝ դժալի չափով ավելացել է։ այդ հանգամանքը բացատրվում է՝

ա) շինարարության ծավալի անհամեմատ ընդարձակումով, և նոր կադրերի պատրաստման տեմպի անբավարար վիճակով։

2. Շինարարական սեզոնի ուշ սկսվելը, բանվորական ուժի վոչ ռացիոնալ գործադրումը, յեղած կադրի աշխատանքով անհամաչափ բեռնավորված լինելը, դյուղ աշխատավոր ձեռքերի գյուղատնտեսական աշխատանքներից ազատ

ամիսներին լիակատար չափով չոգատարդ-
ծելն ավելի սրելին շինարարների աշխա-
տանքի շուկայում եղած լարվածությունը:

3. Աշխատանքի կամիսարիատի կողմից ձեռնարկած միջոցները վորակյալ շին-բանվորների զգացվող պակասը լրացնելու նպատակով, նոր կադրերի պատրաստման գործում (Շինուսի, շինհիմնարկներին կից բրիգադաների կազմակերպումը) վորոշ չափով մեղմացրին պակասը, սակայն, վորպես առաջին վորձ, յուրջ թերություններ ունեն:

Վորոշ ցեխեր կազմակերպելու (վառարանագործների, ծեփագործների) չի հարմարեցվել այդ որինակ՝ շինաշխատանքների սկսվելու ժամանակի հետ. հետևանքը յեղել է այն, վոր այդ ցեխերը ժամանակին չեն ոգտագործվել շինաշխատանքներում:

բ) աշխարհագրի դասընթացներում ասվորողների համապատասխան կադր չի ընտրվել (անչափահասներ— զինվորականներ) դասընթացներն ավարտելուց հետո այդպիսիները շինաշխատանքներում չեն ոգտագործվել:

4. 1929—30 թ. Աշխատանքի կոմիսարիատի բանուժի պատրաստման ծրագրով նախատեսված 650 հ. «ՑԻՏ»-ի մեթոդով և 200 հ. պատրաստվում են Շինուսի միջոցով: Շինհիմնարկներին կից բրիգադային կարգով պատրաստվում են 666 հ. ընդամենը 1516 հ.: Այդ ծրագիրն իրականացնելու դեպքում, դպրի չափով բանուժի պակասը մեղմանում է, սակայն ընթացիկ տարվա վերջավորիչ թվերով նախատեսված շինարարության վորակյալ բանուժի պահանջի տեսակետից անբավարար է:

5. Համամիութենական Կենտգործկոմի նախագահության 3 հուլիսի 29 թ. վորոշումը, վորով շինհիմնարկներն աշխատավարձի ֆոնդից բանուժի պատրաստման նպատակով, 2,25 տոկոս գումարը մուծել են Աշխատանքի կոմիսարիատի մարմիններին և վոր բանուժի պատրաստման գործը կենտրոնացվում է, հնարավոր է դառնում ապահովել վորոշ ծրագրայնության և անհրաժեշտ հսկողություն:

Հետագայում բանուժի պատրաստման տեմպն արագացնելու, յեղած թերությունները վերացնելու նպատակով Կառուցողների Արհմիության Կենտվարչու-

թյան Ա-րդ պլենումն անհրաժեշտ է հաստատում:

1. Ցեղեր ով բանուժի պատրաստման կարևոր նշանակությունից՝ առաջիկայում միութենական և շինարարական մարմինների ուշադրության կենտրոնը պետք է հանդիսանա բանուժի պատրաստման տեմպին կապված խնդիրը, այն իմաստով, որ Աշխատողկոմատի մարմիններին բոլոր հնարավոր միջոցներով ժամանակություն ցույց տրվի վոչ միայն վերահսկիչ թվերով նախատեսված բանուժը պատրաստելու, այլև լրացուցիչ այնպիսի միջոցներ կիրառել, որ կարելի լինի ունեցած պահասը առավելագույն չափով նվազեցնել:

2. Դասընթացները և նրա առանձին ցեխերի կազմակերպման և արձակման ժամանակը պիտի հարմարեցնել շինարարության տվյալ շրջանի պահանջի հետ այնպես, որ դասընթացներն ավարտելուց անմիջապես հետո պատրաստվող կադրը ներգրավվի շինաշխատանքներում:

3. Պատրաստվող կադրի համար արտադրական պրակտիկայի աշխատանքը նախորդ ապահովելու նպատակով, մեռած սեզոնին սովորելու ընթացքում նրանց պիտի ոգտագործել շինարարության պետքերի համար «Ստանդարտ» ձևի իրեր պատրաստել (քար, դուռ, լուսամուտ և այլն), պետք է նախորդք պայմանագրեր կնքվեն համապատասխան շին. հիմնարկների և Աշխատողկոմատի մարմինների միջև:

4. Հանձնարարել Աշխատողկոմատի Աշխատանքի բաժնին՝ հատուկ ուսումնասիրություն կատարել և պարզել թե՝

ա) շին. հիմնարկներին կից կազմակերպված բրիգադների համար արհեստ սովորեցնելու գործում ինչպիսի՛ պայմաններ են ստեղծել շին. հիմնարկները, ի՛նչպես են կազմակերպված արհեստի հետ կապված տեսական պարապմունքները.

բ) որքանով սահմանված բրոնիան ի՛նչ չափով և կիրառված առանձին շին-հիմնարկում, հատուկ միջոցների դիմել բրոնիայի պակասը լրացնելու և նրանց արհեստ սովորեցնելու գործի վորոշ սխեմա մտցնելու համար:

5. Դասընթացների ուսանողների կազմը խմբավորել բացառապես քաղաքի Աշխարհամասերում ցուցակագրված մեծա-

հատակ այն գործարանների, որոնք չինարարական աշխատանքի վորոշ վարձ ունեն, վորոշ տոկոսով ընդլայնել նաև ուրիշ արհեստի վոչ չինարարական այն գործարանների, որոնք աշխատանքի դնարու հեռանկար չունեն:

6. Հավանություն տալ Աշխատկոմատի այն ձեռնարկումներին, որ նախատեսվում է Յերևանում «ՅԻՏ»-ի բացվա կազմակերպել և չինարարական բաշնուժ այդ մեթոդով պատրաստել: Գրանել, որ հրահանգչական հատուկ կազմ ևս պետք է ստեղծել բարձր վարձի բանվորներից:

7. Շինարարության մեջ կիրառվող աշխատանքի նոր ձևերը (մեքենայնացումը) հին մեթոդներով սովորած ներկայացումը կազմը իր վարձով չի կարողանում բավարարել: Պլենումը գտնում է, որ բաշնուժի վերապատրաստման խնդիրն ակնուժի վերապատրաստման խնդիրն ակտուալ հարց է, մասնավորապես չինարարական հիմնարկներում յեղած բրոնեան պետք է պատրաստվի վոչ թե հին մեթոդով՝ անհատական ուսուցման ձևով, այլ բրիգադային սիստեմով չինարարության ժամանակակից պահանջներից բղխող տեխնիկայով: Գործնական պարապմունքներին զուգընթաց՝ անհրաժեշտ է մացնել նաև արհեստի հետ կապված տեսական պարապմունքներ:

8. Մեծահասակ գործարանների չինարարական դասընթացներում ներգրավելու պայմաններ ստեղծելու համար, անհրաժեշտ է նրանց տնտեսապես չահագրգռել. կենսաթոշակի յեղած չափը պետք է ավելացվի: Բացի այդ, դասընթացների գործնական պարապմունքների ընթացքում ուսանողի արտադրանքից պետք է բաժին հանել նրան:

9. Առաջարկել Աշխատկոմատի Աշխուկայի բաժնին վերանայելու բանուժի պահանջի պլանը, այդպիսին ավելի ռեալ դարձնելու համար՝ իր նկատի ունենալով արտադրական անընդհատ շարժի և տարվա անցնելու պայմանները:

10. Առաջարկել Աշխատկոմատի Աշխուկայի բաժնին ուժեղացնելու իր հսկողությունը 0,75-ի տոկոս գանձման և նպատակահարմար ոգտագործման վրա:

11. Պարտավորացնել չինմարմիններին՝ Աշխատկոմատի մարմինների հետ

կնքելու համապատասխան պայմանագրեր, բանուժի մատակարարման մասին և միաժամանակ առաջարկել Աշխուժի բաժնին՝ կազմակերպված և պլանային կերպով բավարարելու շին մարմինների պահանջներն ամառվա յեռուն սեզոնում:

ՊԵՏՊԼԱՆԻ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ — ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ 1929–30 Թ. ՍՏՈՒԳԻՉ ԹՎԵՐԻ ՄԱՍԻՆ.

1. Արձանագրել, վոր ժողովրդական տնտեսության արագ զարգացման հետ, վորպես նրա անհրաժեշտ նախադրյալ, ուժեղ թափով ծավալվել ու ծավալվում են շինարարական աշխատանքները բոլոր բնագավառներում:

2. Ընդունելով, վոր յերկրի վողջ տնտեսության սոցիալիստական ու տեխնիկական վերակառուցման հիմնական նախապայմաններից մեկը հանդիսանում է շինարարությունը, անհրաժեշտ համարել այս ճյուղի վրա է՛լ ավելի կենտրոնացնել խորհրդային հասարակայնության ու մանավանդ բանվորական կառուցողական մասսաների ուշադրությունը:

3. Շինարարության ասպարեզում ներկայումս առաջադրվող կարևորագույն պահանջներն են՝ շինարարական պլանի լիակատար իրագործումը, շինարարության ռացիոնալացումն ու եժանացումը, վորի համար՝

ա) առաջին հերթին պետք ուժեղացնել շինարարական աշխատանքների պլանային ղեկավարությունը, հաշվառումն ու վերահսկողությունը՝ ստեղծելով կազմակերպչական ու փոխհարաբերության առավել նպաստավոր ձևեր շինմարմինների միջև.

բ) լավագույն կերպով կազմակերպել շինարարության ապասարկման գործը— կանոնավորել ֆինանսավորումը, շինանյութերի արտադրությունը, մթերումը, ներածումը, փոխադրությունն ու մատակարարումը, բանվորական ուժի ապահովումը, ըստ պահանջված արհեստների ու վորակի.

գ) ամեն կերպ իրագործել շինարարական բոլոր պրոցեսների տեխնիկական ու տնտեսական ռացիոնալացման խնդիր-

նելը, սկսած հեռագրական նախագծման գործից և վերջացրած կառուցումների ընթացքի հսկողությամբ. գործ տալ անհատական ու տեխնիկական նպատակահարմար կոնտրոլկայների մշակման, ստանդարտացման, աշխատանքների մեքենայացման և ռացիոնալացման համար ձեռնարկվելիք բոլոր միջոցառումներին.

դ) ընդունել փորձա-ցուցադրական գործը և գիտական հեռագրական աշխատանքները շինարարության բոլոր բնագավառներում, նպատակ ունենալով ստուգելու տեղական շինանյութերի ու նրանց նպատակահարմար գործածության խնդիրը, կառուցվածքների ձևերը, բուն տեղական պայմանների, ինչպես և շինարարական առաջին աշխատանքների առավելագույն ռացիոնալ ձեռնարկումները հայտնաբերելու.

յե) փորձես հրամայական պահանջ առանձնապես պիտի չեշտել արտադրողականության բարձրացումը, շինարարության անպայման եժանացումը, արագացումը և ներգրավված կումարների արտադրական անհատական էֆֆեկտի հայտնաբերումը, հնարավոր կարճ ժամանակամիջոցում:

4. Մասնանշելով շինարարության պլանավորման ղեկավարման գործի թույլ վիճակը, անհրաժեշտ համարել ուժեղացնել Գլավպլանի աշխատանքները այդ ուղղությամբ: Հատկապես ուշադրություն դարձնել պլանների իրականության մոտեցնելու և մանրամասն ուսումնասիրությամբ մշակելու վրա: Վերակազմել շինարարության պլանավորման գործն այնպես, որ նա մաքսիմալ չափով նպաստի և ժամանակի ընթացքին իր ժամկետների հաջող ընթացքին, կապերով, պլանային ելեմենտներով, մակերեսչական գրույցներով ու պլանամակերեսչական գրույցներով:

5. Այս բոլորի կենսագործումը հնարավոր և ապահովել միայն՝ կառուցողական-տեխնիկական պերսոնալի անմիջական ու ակտիվ մասնակցությամբ, սկսած շինարարության պլանավորման գործից, մինչև նրա իրագործման բոլոր ետապները:

6. Մանավանդ հսկայական դեր ու-

նելը, սկսած հեռապատկան նախագծման գործից և վերջացրած կառուցումների ընթացքի շահագործումով. զարկ տալ տնտեսական ու տեխնիկական նպատակահարմար կոնստրուկցիաների մշակման, ստանդարտացման, աշխատանքների մեքենայացման և ռացիոնալացման համար ձեռնարկվելիք բոլոր միջոցառումներին.

դ) ընդունել փորձա-ցուցադրական գործը և գիտական հետազոտական աշխատանքները շինարարության բոլոր բնագավառներում, նպատակ ունենալով ուսումնասիրելու տեղական շինանյութերի ու նրանց նպատակահարմար գործածության խնդիրը, կառուցվածքների ձևոնտու ձևերը, լուսատեղական պայմանների, ինչպես և շինարարական առաջին աշխատանքների առավելագույն ռացիոնալ ձեռնարկումներ հայտնաբերելու.

յե) փոխանցել հրամայական պահանջ առանձնապես պիտի չեղնել արտադրողականության բարձրացումը, շինարարության անպայման էժանացումը, արագացումը և ներգրավված դումարների արտադրական տնտեսական էֆֆեկտի

հայտաբերումը, հնարավոր կարճ ժամանակամիջոցում:

4. Մատնանշելով շինարարության պլանավորման զեկավարման գործի թույլ վիճակը՝ անհրաժեշտ համարել ուժեղացնել Պետպլանի աշխատանքներն այդ ուղղությամբ: Հատկապես ուշադրություն դարձնել պլաններն իրականության մոտեցնելու և մանրամասն ու ստույգ ցուցանիշներով մշակելու վրա: Վերակազմել շինարարության պլանավորման գործն այնպես, որ նա մաքսիմալ չափով նպաստի և ժամանակի շինարարության հաջող ընթացքին իր ժամկետներով, պլանային էլեմենտներով, կազմակերպչական դրույթներով ու պլանային տեսակ նախատեսումներով:

5. Այս բոլորի կենսագործումը հնարավոր է ապահովել միայն՝ կառուցողական-տնտեսական պերսոնալի անմիջական ու ակտիվ մասնակցությամբ, սկսած շինարարության պլանավորման գործից, մինչև նրա իրագործման բոլոր եղանակները:

6. Մանավանդ հսկայական դեր ու-

նեն կատարելու այս տարեվերջում պրոֆ-
ակտիվը և արտադրական խորհրդակ-
ցությունները։ Շինարարության արտա-
դրական պլանների քննությունը, անընդ-
հատ շարաթվա ու տարվա անցնելը, սո-
ցիալիստական մրցումը ծավալելը, աշ-
խատանքի դիսցիպլինան բարձրացնելը,
արտադրության ամեն մի ելեմենտի տեխ-
նիկայի ու կազմակերպման կատարելա-
գործումը—ահա այն կարևորագույն
խնդիրները, վորոնց լուծման համար մո-
բիլիզացիայի պիտի յենթարկել բանվո-
րական մասսաների միտքն ու յեռանդը՝
Արհեստակցական կազմակերպությունե-
րի ղեկավարությամբ։

ԲԱՆԱՁԵՎ

Պլենումը լսելով ընկ. Հ. ԱՂԱԲԵԿ-
ՅԱՆԻ զեկուցումը 1930 թ. համար վե-
բակնքված հավաքական պայմանագրերի
վերակնքման կամպանիայի աշխատանք-
ների արդյունքների մասին՝ արձանա-
գրում է, վոր այս տարվա պայմանագրե-
րով ձեռք են բերված մի շարք նվաճում-
ներ, այն է՝

ա) մշակված և պայմանագրերով

բանվորության իրավական և կենցաղա-
յին պայմանները բարելավող կետեր։

բ) հավաքական պայմանագրերով ա-
պահովված և բանվորների յերեխաներին
միության անդամների հետ հավասար ի-
րավունքով բոլորայի միջոցով առաջին
հերթին աշխատանքի ընդունվելու խնդ-
իրը։

գ) ապահովված և ՅԻՏ-ի և բրիգա-
դային կարգով բանվորներին վարակավո-
րելու խնդիրը։

դ) հավաքական պայմանագրերով
ձևակերպված են համապատասխան մի-
ջոցներ՝ աշխատանքի պաշտպանության,
աշխատանքի պայմանների առողջացման
և անվտանգության տեխնիկայի հար-
ցերը։

յե) 5 ու կես ամիս աշխատելուց հետ
առ անչափահասներին արձակուրդ հատ-
կացնելը։

զ) տարիֆային նոր ռեֆորմի լրիվ
չափով կիրառումը։

է) հավաքական պայմանագրերով
յերկարատև պարտավորությունների
վերցնելը, վորպիսին միանգամայն բըլ-

խում է մեր ներկա չինարարության հաջող ասուրյա պահանջներից.

բ) նախկին հավաքական պայմանագրերի սատարման, բրիգադաների աշխատանքների արդյունքները, նոր պայմանագրերի անքսուի մասսայականացումն ու պայմանագրերի ճիշտ ժամանակին վերակնքման կամպանիայի հաջող ավարտումը:

2. Արձանագրել նաև այն, որ վորոշ անտեսարներ հավաքական պայմանագրերի վերակնքման կամպանիայի ընթացքում ձգձգումներ եյին առաջ բերում վերակնքման աշխատանքներում:

3. Պլենումն առաջարկում է նախարարության՝ միջոցներ ձեռք առնել, վորպեսզի կարճ ժամանակամիջոցում փոքրիկ գրքույկների ձևով տպագրվեն պայմանագրերն ու բաժանվեն բանվորներին. դրա հետ զուգընթաց՝ ընդհանուր ժողովների միջոցով, մինչև վերջին ամսի վերջը, մասսայականացնել պայմանագրերը՝ ծանոթացնելով բանվորներին այս տարվա պայմանագրերով վերցրած, ինչպես իրենց, նույպես և միության պարտավորությունների հետ (աշխատանքների արտադրողականության բարձրացման և ինքնարժեքի իջեցման ընդհատումներում և այլն):

4. Ամենախիստ կերպով պայքարել հավաքական պայմանագրերը խախտելու յերևույթների դեմ, կանգ չառնելով անգամ դատական միջոցների դեմ:

5. Բանվորության մասնակցությամբ տնտեսական մարմինների միջոցով շտապեցնել գնացուցակների վերամշակումն այն հաշվով, որ մինչև փետրվար ամսի վերջը գնացուցակների վերամշակման աշխատանքներն ավարտված լինեն:

ՀՍՍՀ — ԵՍՍՀ

«Ազգային գրադարան»
NL0197572